լատիներէն Aracœli բառը կը նշանակէ պարզապէս «երկնախորան», «երկնային բնակավայր» և մեր «Առաքեալ» բառին հետ ո՛և է առընչութիւն չունի, ո՛չ ծագումով, ո՛չ կերպարանափոխութեամբ, ո՛չ արմատով, ո՛չ ալ ազգակցական կապերով (filiation)։ Տարիներ առաջ Պրազիլիոյ Minas Geraës գաւառին անուան մէջ շատեր կարծեցին տեսնել Մինաս Զերազ հայանունը։ Հնչումի և ձևի նմանութեան ժամանակավրէպ դրուելու արդիւնք։ «Հեռաքննենք և երեւան հանենք մեր մեծութեան փաստերը», այո՛, բայց... զիտականօրէն և երբե՛ք ազատ երեւակայութեամբ, մանաւանդ երբ կ'ուզենք մեր գրութիւնը Ս. պապին։

Անցողակի պարտաւոր եմ, ըսել թէ, ի բաց առեալ Մխիթարեան Հայրերը, մեր բանասէրներուն շատերը, իմ կարծիքովս, անծանօթ են լատիներէն լեզուին – խօսքս Տօքթ.ին համար չէ անշուշտ։ Սակայն, կը հարցնեմ թէ բանասիրութեամբ, այսինքն philologie-ով, որ իր էութեամբն իսկ բաղդատական է, կարելի՞ է արդեօք լրջօրէն ու արդիւնաբեր կերպով զբաղուիլ, առանց այդ լեզուին ուսումնասիրութիւնը մշակելու։

Ա. ՍԱԼՄԱՍԼԵԱՆ

ԴԻՒԹԱՆՔ

Մի փնտռեր դուն անձկոտ՝ հեշտանքը կարմիր
Աղմկայորդ ամբոխին, ուր քրքիջ կայ
Դիւագրգիռ. արշալոյսներն ոսկեծիր
Ըլլան աչքիդ լոկ նրպատակ յակընկեայ։

Լայնափեռեկ փողոցներէն երբ անցնիս՝
Սրտիդ դռնակն ամրապնդէ մահուան դէմ,
Վառ կրքերուս յորձանքէն գուցէ սարսիս՝
Ինչպէս մատղաշ թուռմբ մը բարի՝ չար հովէն։

Երազն աղուոր է, սիրելիս, ծաղիկ հիր,
Որ կը փթթի գաղտափարի պարտէզին՝
Եթէ երբեք արեւին տակ լայնալիր
Կը փնտրուես գեղեցկութիւն հոյաշէն։

Երազն աղուոր է, երազելը հեշտին,
Թերեւընթաց ու քաղցր արշաւ մ'անվեհեր՝
Աստղաձամուշ ուղիներէն շուտասին,
Երբոր նիւթին ծանրոցը վրայ չի ձնշեր։

Ես կը վախնամ խուշ դաւէն կոյս աչքերուս,
Որոնց խորքին մէջ դիւցազն իսկ է մոխիր,
Սիրոյ ծովին վրայ զոռեր կան դարերուս,
Աւազատուներդ ուռեցուր դուն ու փախիր...։

Թող պարարին բիբերդդ լոյս արցունքով
Կոյս ատաղերուս, որոնց հայեացքն է անքոյթ,
Եւ դուն փնտռէ անձկոտ՝ սէր, կեանք սրտաթով՝
Սրբամաքուր հայելիին մէջ հոգւոյդ։

ԱՐՄԱՒԻՐԵԱՆ

ԷՋԵՐ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԷՆ

ՏԱՂԱՒԱՆ ՉԱՔԱՐԻԱ

Միջնադարեան տաղերգուներու շարքում մի համեստ էջ է գրաւում երգիչ ՉԱՔԱՐԻԱ որ իր «ՏԱՂ ՈՂՈՐՄՈՒԿ» խորագիր ոտանաւորովն արծարծել է բարոյախօսական գաղափարներ, ստեղծագործութեան նիւթ դարձնելով իրական կեանքի երեւոյթները։

Նա վերլուծելով կեանքի էութիւնը, Սողոմոն իմաստունի նման, եկել է այն եզրակացութեան, որ «աշխարհս ամենայն ունայն է» և ամէն ինչ «թափուր և դատարկ»։ Ուստի, խորհուրդ է տալիս՝ էս անցաւոր կեանքում ոչ միայն չարութիւն չգործել և պարտականութիւնների մէջ չթերանալ, այլ և դժուարութիւնների առաջ երբէք չընկճուել ու չյուսահատուել։ Աւելի խորանալով իր փիլիսոփայական մտորումների մէջ, նա յորդորում է՝ էս կարճ կեանքում հոգով ու սրտով միշտ ուրախ լինել և ապաւինել Աստծուն։

Զաքարիան եւս, միջնադարեան երգիչների նման, իր տաղի վերջին տան մէջ յիշատակում է իր անունը, իսկ ոտանաւորի ամէն մի տան առաջին տասերը նոյնպէս պատկերում են ՉԱՔԱՐԻԱ։

Նրա տաղն ընդօրինակեցինք մեր գրական արխիւում գտնուած և 1645 թուականին գրուած ձեռագիր մատեանի 26-րդ էջից։ Դա պարզ, անպաճոյճ, բայց սահուն հայերէնով գրուած մի ոտանաւոր է, որի հիմնական կառուցուածքի, չոչափած մաքերի, պատկերաւորութեան և, վերջապէս, տաղաչափական արուեստի մասին որոշ գաղափար տալու համար այս տեղ առաջ բերենք նոյնութեամբ.

Զ. *արտասւեմ մեղօք եղկելի,*
Թչուառացեալ մարմնով գերի.
Մի լինիր անյոյս և թերի.
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես։

Ա. *ստուածածին սուրբ կոյս է,*
Մեղաւորաց դարձ և յոյս է.
Ապագայի կեանք և լոյս է,
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես։

Բ. *աջալերեա՛ սիրտ և խնդա՛*
Ուրախ լեր անձն իմ, և ցնծա՛։
Զարթացիր դու և բերկրեա՛։
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես։

Ա. *չխարհս ամենայն ունայն է,*
Թափուր և դատարկ միայն է,
Զարութիւն ի քենէ հանէ։
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես։

Բ. *ուզ և նուազ արարած,*
Որ կողոպտէ զմարդն ի կենաց,
Պարտիս ապաւինել յԱստուած.
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես։

Ի. *քեզ յուսամ Տիրածին,*
Մարիամ սուրբ Աստուածածին,
Երկրպագեմ քո միածնին.
Սիրտ իմ. ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես։

Ա. *ո յինէն ի քեզ զայս խրատ,*
Մի՛ լինիր բնաւ յուսահատ,
ՉԱՔԱՐԻԱ է երգս այս գրուատ,
Սիրտ իմ, ընդէ՞ր տխուր ես,
Ուրախ լեր, ընդէ՞ր տրտում ես։

Թէ ո՞ւր են գտնուում այս տաղաբանի միւս երգերը և ի՞նչ է ներկայացնում նրա կեանքի և հասարակական գործունէութեան պատմութիւնը, յայտնի չէ։ Բանասիրական հետազօտութիւնը ու պրպտումները, թերեւս, մի օր լուսաբանեն այդ էական երեւոյթները։ Մինչ այդ, արձանագրենք, որ նրա տաղի բովանդակութիւնն ընդգծում է, թէ նա հանդիսացել է իր դարաշրջանի բարոյախօս–տաղասացներից մէկը, մի երգիչ, որը մտաւորապէս աւելի բարձր կանգնելով իր ժամանակի հասարակութիւնից, վայելել է ժողովրդի սէրն ու համակրանքը։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թէհրան

© National Library of Armenia